

67/14 6545



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 10 » 06 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 074 - 24

Նախաձեռնող՝

«Զինջ» ՍՊԸ

ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն շրջան, Քանաքեռի 11-րդ փողոց տուն 57

Գործունեությունը՝

Արարարի համայնքապետարանի կարիքների
համար կեղտաջրի մաքրման կայանի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեկրկություն
Արարարի մարզ

Առդիր եզրակացությունը՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 074 - 24

«10» հունիսի 2024թ.

Արարատի համայնքապետարանի կարիքների համար կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Զինջ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատ քաղաք

Ներածական մաս. Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը պատրաստվել է «Զինջ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից Արարատի մարզի, Արարատ համայնքի պատվերով՝ Արարատ քաղաքի ՈԿՖ-ի Բանական թաղամասի և Արարատ գյուղի մի հատվածի կենցաղային կեղտաջրերի մեխանիկական և կենսաբանական մաքրման կայանի կառուցման համար:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ №02022024-03-0007, /ծածկագիրը՝ QKDPCVRBSSQJ/, ճարտարապետահատակագծային առաջադրանքը №75/1, տրված՝ 20.07.2023 թվականին, նախագծի իրականացման շրջանակներում տեղում կատարված մասնագիտական ուսումնասիրությունները: Հողամասի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.88785 հա:

Նկարագրական մաս. Ներկայումս Արարատ համայնքի Արարատ քաղաքի ՈԿՖ բանական թաղամասի և Արարատ գյուղի մի հատվածի կենցաղային կեղտաջրերը անկազմակերպ, ցրված հոսքերով, առանց մաքրման հեռացվում են մոտակա դրենաժային ջրանցքներ: Համայնքապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է նշված բնակելի թաղամասերի ջրահեռացման կոլեկտորների վերակառուցում և կեղտաջրերի լիարժեք(մեխանիկական և կենսաբանական) մաքրման կայանի կառուցում: Կեղտաջրերի մաքրման կայանը նախատեսվում է կառուցել ՈԿՖ-ի Բանական թաղամասից դեպի հարավ-արևմուտք, մոտ 280 մ հեռավորության վրա՝ նախկինում կառուցված և ներկայումս քայքայված վիճակում գտնվող կոյուղու պոմպակայանի շենքի հարևանությամբ: Նախագծի շրջանակներում կառուցվող կեղտաջրերի մաքրման կայանի համար ընտրված տարածքի սահմանագծով անցնելու է նաև վերակառուցվող ջրահեռացման կոլեկտորը: Մաքրման



կայանի տարածքը, որը կազմում է մոտ 0,4 հա, նախատեսվում է ցանկապատել ամբողջ պարագծով, և 0,38 հա լրացուցիչ՝ բարեկարգման և առվակային համակարգով միկրոկլիմա ստեղծելու նպատակով: Աշխատանքային նախագծի շրջանակներում հավաքագրված ելակետային տվյալների վերլուծության արդյունքում, հաշվի առնելով ներկա բնակչությունը՝ 10,000 մարդ մինչև հաշվարկային 2043թ. տարեկան 0,45% աճով բնակչության հեռանկարային թվաքանակը՝ 11,000 մարդ, հաշվարկվել է Արարատ քաղաքի ՈԿՖ-ի Բանավան թաղամասի և Արարատ գյուղի բնակչությունից առաջացող կենցաղային կեղտաջրի միջին օրական ջրաքանակը, որը կազմում է 1980 մ³/օր: Սույն աշխատանքային նախագծի հիմնական նպատակն է ապահովել կեղտաջրի մեխանիկական և կենսաբանական մաքրում և մաքրված կեղտաջուրն օգտագործել ոռոգման նպատակով:

Համաձայն տեխնիկական առաջադրանքի՝ մշակվել է կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման նախագիծը, որով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- համակցված պոմպակայանով ճաղավանդակի կառուցում՝ նախատեսվում է 2 իրար հաջորդող ճաղավանդակների տեղադրում՝ միջճաղային, համապատասխանաբար, 50 մմ և 20 մմ բացվածքներով,
- ավազորսիչ առաջնային պարզարանի կառուցում,
- աէրոթենկի կառուցում՝ արհեստական օդավորմամբ աէրացվող բաժանմունք (աէրոտենկ), որտեղ կեղտաջուրը ենթարկվում է հիմնական կենսաբանական մաքրման,
- երկրորդային պարզարանների կառուցում (4հատ), որոնց հիմնական ֆունկցիան տիղմի նստեցմամբ մաքրված կեղտաջրի պարզեցումն է,
- օդավորվող պարզարանների կառուցում, որտեղ կեղտաջուրը նորից ենթարկվում է աէրացիայի և թթվածնով հագեցած մաքրված կեղտաջուրը ավելի խորը մաքրման նպատակով հեռացվում է դեպի բնական օդավորմամբ առվակային համակարգ,
- բնական օդավորմամբ առվակային համակարգ՝ բնահեն տեխնոլոգիայի կիրառմամբ, որտեղ կեղտաջուրը բաց առվակներով և փոքր լճակներով անցնելով ենթարկվում է լրացուցիչ մաքրման և այնուհետև հեռացվում դեպի դրենաժային ջրանցք,
- տիղմի ջրազրկման և օդամղիչների շենքի կառուցում՝ 12.4x5.0 մ հատակագծային ներքին չափերով,
- համապատասխանաբար 3x3 մ և 3x4 մ հատակագծային չափերով ավազի և տիղմի հրապարակների կառուցում:

Արարատ քաղաքի ՈԿՖ-ի Բանավան թաղամասի և Արարատ գյուղի մի հատվածի կենցաղային կեղտաջրերի մեխանիկական և կենսաբանական մաքրման կայանի նախագծման ժամանակ քննարկվել են մի քանի այլընտարանքային տարբերակներ:

1. Կեղտաջրի մաքրում ամբողջությամբ բնահեն տեխնոլոգիայի կիրառմամբ, որը բավականի էժան կլիներ, շահագործման քիչ ծախսեր է պահանջում: Սակայն այս տարբերակը չի ընդունվել, քանի որ բավականին մեծ հողատարածք էր պահանջվում (մոտ 10հա), իսկ համայնքը այդ չափի հողատարածք տրամադրելու հնարավորություն չուներ,
2. Կեղտաջրի մաքրման գործընթացի իրականացման դասական եղանակ, որը ներառում է կեղտաջրի մեխանիկական և կենսաբանական մաքրում ինչպես նաև տիղմի մշակում:
3. Զրոյական տարբերակ՝ մաքրման կայան չի կառուցվում և ՈԿՖ-ի Բանավան թաղամասի և Արարատ գյուղի մի հատվածի կենցաղային կեղտաջրերը լցվում են դրենաժային համակարգ՝ աղտոտելով ստորերկրյա ջրային հորիզոնները, վատացնելով ոռոգման ջրի որակը:

Մաքրման կայանը ներառում հետևյալ կառույցները՝



1. Ճաղավանդակ/համակցված պոմպակայանով

Հաշվի առնելով կեղտաջրի տարածքում կառուցվող ջրահեռացման կոլեկտորի և նախագծվող կեղտաջրի մաքրման կայանի նիշերը՝ կեղտաջուրը դեպի մաքրման կայան տեղափոխվելու է պոմպակայանի միջոցով: Պոմպակայանում նախատեսված է նաև ճաղավանդակների կառուցում: Կեղտաջուրն անցնելով խոշոր (50մմ) և մանր (20մմ) բացվածքներով ճաղավանդակներով, լցվում է խորասուզված պոմպերի համար նախատեսված փոսորակի մեջ: Անձրևաջրերի և ձյան մուտքը պոմպակայան բացառելու համար՝ մոտ 2 մ բարձրության վրա նախատեսված է մետաղական շվաքարան: Ճաղավանդակներում բռնված աղբը նախատեսվում է հավաքել չժանգոտվող պողպատից ցանցարկղի մեջ, իսկ աղբով լցված ցանցարկղը պոմպակայանից նախատեսվում է բարձրացնել շվաքարանի տակ մոնտաժվող էլեկտրական բազմաճախարակի միջոցով, և դատարկել պոմպակայանի հարևանությամբ տեղադրվող չժանգոտվող մետաղական աղբամանների մեջ:

2. Ավազորսիչ /Առաջնային պարզարան


Պոմպակայանից կեղտաջուրը մղվում է ավազորսիչ պարզարանի արտաքին պատին կից մետաղական ընդունիչ հոր, որից հետո նախատեսվող փականային հանգույցով բաշխվում է ավազորսիչ երկու պարզարանների միջև: Պարզարանների հատակների սկզբնամասերում ամբողջ լայնությամբ նախատեսված են փոսիկներ, որտեղից ավազը նախատեսվում է հեռացնել դեպի ավազի հրապարակներ պոլիէթիլեն խողովակների միջոցով: Պարզարանների հատակները դեպի փոսորակներ ունեն թեքություններ և հատակին նստած ծանր և խոշոր մասնիկները (ավազը) դեպի փոսորակներ նախատեսվում է հավաքել և տեղափոխել վերջիններիս մեջ նախատեսվող էլեկտրական շարժաբերով աշխատող մեխանիկական քերիչների միջոցով:

3. Աէրոփենկ

Ավազորսիչ պարզարաններից պարզեցված կեղտաջուրը չժանգոտվող մետաղական տաշտակների միջոցով հավաքվում և տեղափոխվում է արհեստական օդավորմամբ աէրացվող բաժանմունք (2 սեկցիայով երկմիջանցքանի աէրոտենկ), որտեղ էլ ենթարկվում է հիմնական կենսաբանական մաքրման: Կեղտաջրի կենսաբանական մաքրումն ապահովվում է յուրաքանչյուր միջանցքի հատակին՝ գրեթե ամբողջ երկարությամբ զուգահեռ տեղադրված երկուական աէրացիոն խողովակների միջոցով: Աէրացիոն սեկցիաներում տեղադրվող օդավորվող խողովակներից յուրաքանչյուրի վրա նախատեսված են փականներ՝ կարգաբերման և անհրաժեշտության դեպքում օդի հոսքը դադարեցնելու նպատակով:

4. Երկրորդային պարզարան

Կենսաբանական մաքրման պրոցեսն անցած կեղտաջուրն աէրոտենկերից չժանգոտվող մետաղական տաշտակների միջոցով հավաքվում և տեղափոխվում է երկրորդային պարզարաններ(4 հատ): Դեպի բոլոր 4 պարզարաններ կեղտաջրի մուտքի խողովակների վրա նախատեսված են դանակային փականներ: Երկրորդային պարզարանների հիմնական ֆունկցիան տիղմի նստեցմամբ մաքրված կեղտաջրի պարզեցումն է: Պարզարաններում նստած տիղմի մաքրման և հեռացման համար նախատեսված է էլեկտրական շարժաբերով աշխատող մեխանիկական տղմաքերիչներ: Վերջիններիս միջոցով հատակին նստած տիղմը նախատեսվում է հավաքել և տեղափոխել պարզարանների վերջում նախատեսված փոսիկների մեջ, որտեղից էլ խորասուզված պոմպերի միջոցով մղվել չժանգոտվող պողպատից հավաքող կոլեկտորի մեջ: Կոլեկտորի վերջում նախատեսված բաժանարարից ինքնահոս եղանակով տիղմի մոտ 70%-ը նախատեսվում է հեռացնել դեպի տղմախտացուցիչ, իսկ մոտ 30%-ը նախատեսվում է վերադարձնել աէրոթենկ: Տիղմի բաշխումը նախատեսվում է իրականացնել հեռացող խողովակների վրա նախատեսվող փականների միջոցով: Վերոնշյալ բաժանարարից



նախատեսված է նաև երրորդ՝ վթարային ելքը, որի նպատակն է տղմախտացուցիչ չաշխատելու դեպքում, տիղմը ժամանակավորապես հեռացվի կայանի հարավ-արևմտյան կողմում նախատեսվող տղմահրապարակներ:

5. Օդավորվող պարզարան

Երկրորդային պարզարանից պարզեցված կեղտաջուրը մետաղական տաշտակների միջոցով հավաքվում և տեղափոխվում է օդավորվող պարզարաններ (2 հատ): Օդավորվող պարզարաններում կեղտաջրերն նորից ենթարկվում է աերացիայի և թթվածնով հագեցած մաքրված կեղտաջուրը ավելի խորը մաքրման նպատակով հեռացվում է դեպի բնական օդավորմամբ առվակային համակարգ:

6. Բնական օդավորմամբ առվակային համակարգ

Կեղտաջրի կենսաբանական մաքրումից հետո սույն նախագծով նախատեսվում է նաև կեղտաջրի ավելի խորը մաքրում բնական օդավորմամբ՝ բնահեն տեխնոլոգիայի կիրառմամբ: Վերջինս իրենից ներկայացնում է բնական օդավորմամբ առվակային համակարգ, որտեղ կենսաբանական մաքրում անցած կեղտաջուրը, բաց առվակներով և փոքր լճակներով անցնելով ենթարկվում է լրացուցիչ մաքրման (իրականացվում է բնական աերացիա) և այնուհետև փակ խողովակով հեռացվում դեպի մաքրման կայանից 11,7 մ հեռավորության վրա գտնվող դրենաժային ջրանցք՝ ոռոգման նպատակով վերաօգտագործման համար: Ոռոգման սեզոնից դուրս մաքրված կեղտաջուրը լցվելու է անմիջապես դրենաժային համակարգ: Բնական օդավորմամբ առվակային համակարգը նախատեսվում է կառուցել կայանի հարավ արևելյան կողմում՝ սանիտարական գոտուն կից, մոտ 0.38 հա մակերեսով հողատարածքի վրա: Մաքրված կեղտաջրի ինքնահոս տեղափոխումը դեպի ջրանցք ապահովելու համար՝ վերը նշված հողատարածքի ամբողջ մակերեսով նախատեսվում է հողի համահարթեցման աշխատանքներ: Բարեկարգված տարածքում նախատեսվում է ստեղծել կանաչ գոտի, որը կարող է ծառայել որպես հանգստի գոտի: Համայնքապետարանի համապատասխան մասնագետի հետ քննարկման արդյունքում, տարածքի կանաչապատման համար նախագծով նախատեսվում է տնկել Արարատի բնակավայրի բնակլիմայական պայմաններին համապատասխան թխկի և հացենի ծառատեսակներ՝ ընդհանուր 72 հատ: Կանաչ տարածքների ոռոգման համար նախատեսված է ներքին ոռոգման համակարգ: Որպես ոռոգման ջուր օգտագործվելու է մաքրման կայանից դուրս եկող մաքրված կեղտաջուրը:

7. Տիղմի ջրազրկման և օդամղիչների շենք

Երկրորդային պարզարաններից հեռացված տիղմի ջրազրկման և աերացիայի նպատակով օդի տրման համար մաքրման կայանի կառուցվածքների հարևանությամբ նախատեսվում է տիղմի ջրազրկման և օդամղիչների շենք: Շենքը բաժանված է երկու հավասար մասերի՝ տիղմի ջրազրկման և օդամղիչների համար: Երկրորդային պարզարանից հեռացված տիղմի մոտ 70%-ն ինքնահոս եղանակով տրվում է տղմախտացուցիչ՝ ջրազրկման նպատակով: Տղմախտացուցիչն իրենից ներկայացնում է կոմպակտ սարքավորում, որն աշխատում է ավտոմատացված կերպով: Ջրազրկված տիղմը նախատեսվում է անվասայլակների միջոցով տեղափոխել և կուտակել ջրազրկված տիղմի համար նախատեսված տղմահրապարակում, իսկ անջատված կեղտաջուրն ինքնահոս համակարգով նախատեսվում է հեռացնել պոմպակայանի պոմպերի խուց: Տիղմի ջրազրկման սարքավորման լվացման նպատակով՝ դեպի շենք նախագծվել է ջրամատակարարման խողովակաշար, և ջրի կուտակման պոլիէթիլեն տարա շենքի ներսում: Լվացման ջրի անհրաժեշտ քանակը և պահանջվող ճնշումն ապահովելու համար նախատեսվել է նաև պոմպի մոնտաժում: Մաքրման կայանի համար անհրաժեշտ օդի քանակի ապահովման համար՝ օդամղիչների շենքում նախատեսվել է հինգ հատ 300 մ³ արտադրողականության օդամղիչների տեղադրում՝ երեքն աշխատող, երկուսը



8. Ավագի և ջրագրկված տիղմի կուտակման հրապարակներ

Առաջնային պարզարաններից հեռացվող ավագի կուտակման և տղմախտացուցիչից ջրագրկված տիղմի հեռացման և կուտակման համար, կեղտաջրերի մաքրման կայանի հարավ-արևմտյան կողմում նախատեսվել են ավագի և տիղմի հրապարակներ: Այստեղ տիղմն ու ավագը, կախված փաստացի կուտակված ծավալից, կարող են պահպանվել 2-ից 3 օր, որից հետո հատուկ մեքենայով տեղափոխվում են աղբավայր: Այդ կուտակիչներում ևս տեղի է ունենում լրացուցիչ ջրագրկում, իսկ անջատված տղմաջուրը դրենաժային համակարգով տրվում է կայանի գլխամաս՝ մաքրման: Դեպի ավագի կուտակման հրապարակ ավագը տեղափոխվում է ինքնահոս եղանակով: Ավագի կուտակման հրապարակի հարևանությամբ նախատեսված է փականային հոր, որտեղ ավագը տեղափոխող խողովակների վրա նախատեսված է տեղադրել էլեկտրական շարժաբերով դանակային փականներ: Փականների բացումը և փակումը նախատեսվում է կարգավորել ավտոմատ կառավարմամբ, կախված պարզարաններում ավագի քերիչների աշխատանքի հետ, որը նախատեսվում է իրականացնել ժամային ռեժիմների միջոցով: Ջրագրկված տիղմը նախատեսվում է տղմախտացուցիչ շենքից անվասայլակների միջոցով տեղափոխել և կուտակել տիղմի համար նախատեսված տղմահրապարակ: Ավագի կուտակման հրապարակում ավագի ջրագրկման նպատակով նախատեսված է դրենաժի իրականացում, որտեղից դրենաժված կեղտաջուրը ինքնահոս եղանակով հեռացվում է պոմպակայն և մղվում դեպի գլխամաս մաքրման: Տիղմի և ավագի կուտակման հրապարակների բետոնե միջնապատի վրա նախատեսվում է անցքերի իրականացում, որպեսզի ջրագրկված տիղմից անջատված կեղտաջուրը նույնպես հնարավոր լինի ավագի հրապարակի դրենաժային համակարգով հեռացնել պոմպակայան՝ դեպի գլխամաս մաքրման մղելու նպատակով: Նկատի ունենալով, որ կեղտաջուրը մաքրումից հետո օգտագործվելու է ոռոգման նպատակով, կայանի տեխնոլոգիական գործընթացում չեն նախատեսվում հատուկ միջոցառումներ կեղտաջրում առկա ազոտի և ֆոսֆորի բաղադրության զգալիորեն նվազեցման համար՝ հնարավորինս պահպանելով դրանք մաքրված կեղտաջրում, որպես օրգանական պարարտանյութերով հարուստ ոռոգման ջուր: Ոռոգման սեզոնից դուրս, ինչպես նաև ձմռանը մաքրված կեղտաջուրը լցվելու է դրենաժային համակարգ՝ ինչը համաձայնեցված է դրենաժը շահագործող կազմակերպության հետ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կարելի է բաժանել երկու փուլի՝ շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում սպասվող ազդեցության:

Շինարարական աշխատանքների փուլ

Շինարարական աշխատանքների ցուցանիշները.

- տևողությունը՝ 16 ամիս,
- շինարարական տեխնիկան՝
- Բուլդոզեր - 2 հատ
- Էքսկավատոր հիդրոմուրճով - 2 հատ
- Ինքնաթափ բեռնատար - 4 հատ
- Ավտոամբարձիչ (Առնվազն 16մ սլաքի թոփչքով և 6տ բեռնունակությամբ) – 3 հատ
- Շերեփավոր բեռնիչ-1 հատ
- Խորքային թրթռիչ – 4 հատ
- Շարժական էլեկտրատեղակայման սարքավորում – 1 հատ
- Պոլիէթիլենե խողովակների եռակցման սարքավորում – 1 հատ
- Ավտոբետոնամղիչ – 2 հատ
- Նիվելեր/Տախետմետր – 1 հատ



- Ներքին այրման շարժիչով շարժական գեներատոր -2 հատ
- Հողային աշխատանքները կիրականացվեն վերը նշված մեքենա- մեխանիզմներով, որի ծավալային ցուցանիշները հետևյալն են՝
- Հողային աշխատանքներ (հանվող զանգված)՝ 2535.0 մ³,
- Ետլիցք և տարածքի բարեկարգում՝ 2088.0 մ³,
- Ոչ պիտանի գրունտի տեղափոխում՝ 447.0 մ³,

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում արտանետումները առաջանում են հողային շերտի փորման, նյութերի բիտումապատման և շինարարական տեխնիկայի աշխատանքի արդյունքում: Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները առաջանում են հիմնականում էքսկավատորների աշխատանքի, հողային զանգվածի հանման, ավտոինքնաթափ մեքենաների բեռնման ժամանակ: Կայանի շահագործման ընթացքում առաջացած նստվածքի, ավազի և տիղմի առավելագույն ծավալներն են.

Ճաղավանդակում բռնված նստվածքը-126տ/տարի, կամ 345 կգ/օր,

Ավազորսիչից հեռացվող ավազը-82.1 տ/տարի, կամ 225 կգ/օր,


Երկրորդային պարզարանից հեռացվող 98.0% խոնավությամբ ավելցուկային տիղմը-11.3 մ³/օր,

Ջրազրկումից հետո, 86% խոնավությամբ, ավելցուկային տիղմը-1.39 մ³/օր:

Կայանի ճաղավանդակի և ավազորսիչի աշխատանքի արդյունքում բռնված խոնավ նստվածքները հեռացվում և կուտակվում են համապատասխան տարայում, իսկ այնուհետև հատուկ աղբատար մեքենայով տեղափոխվում աղբավայր: Մաքրման կայանի շահագործման ընթացքում առաջացած չոր նստվածքն ուղղակիորեն տեղափոխվում է աղբավայր: Ավելցուկային տիղմը, համապատասխան սարքավորման միջոցով ջրազրկումից հետո, նույնպես տեղափոխվում է աղբավայր: Ինչպես նստվածքը, այնպես էլ տիղմը չեն համարվում «վտանգավոր թափոն», դրանք դասվում են 4-րդ կարգի վտանգավորության դասին: Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ավտոդողերի լվացման, ինչպես նաև բանվորների, վարորդների և պահակների կենցաղային, տնտեսական ջրօգտագործման համար: Մաքրման կայանում վթարային իրավիճակ կարող է ստեղծվել էլեկտրական էներգիայի մատակարարման խափանման դեպքում կամ բնական աղետների արդյունքում: Էլեկտրական էներգիայի մատակարարման խափանման դեպքում նախատեսվում է կայանի անխափան աշխատանքը ապահովել դիզելային գեներատորի միջոցով: Մաքրման կայանի յուրաքանչյուր բլոկում (մեխանիկական և կենսաբանական) տեղադրվելու են կրկնակի սարքավորումներ՝ յուրաքանչյուրը 50% մաքրման հզորությամբ: Սարքավորումներից մեկի խաթափանման դեպքում մաքրումը ժամանակավորապես շարունակվում է մյուս սարքավորման միջոցով: Իսկ արտակարգ վթարի դեպքում, երբ շարքից դուրս են գալիս երկու բլոկներն էլ և հնարավոր չի լինում այն արագ վերականգնել, մաքրման կայան մտնող կեղտաջուրն անմիջապես ուղղվում է դրենաժային/ոռոգման համակարգ: Սա ընդունված պրակտիկա է ցանկացած կեղտաջրերի մաքրման կայանի համար: Բնական աղետների ժամանակ (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն) կայանի աշխատանքը կանգնեցվում է և անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:

Պատճառաբանական մաս.

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշման սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Արարատի մարզի Արարատ խոշորացված համայնքում: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի «Արարատ համայնքի մշակույթի»



և արվեստի կենտրոն» ՀՈԱԿ-ի նիստերի դահլիճում «Ջինջ» ընկերության կողմից ներկայացված Արարատի համայնքապետարանի կարիքների համար կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N°11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 1-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
 - շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
 - շինությունները ծածկել փոշու տարածումը կանխող ցանցով համապատասխան բարձրությամբ,
 - շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արարատի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Արարատի քաղաքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Զրահեռացման համակարգերի օգտագործման, հեռացվող ջրերի մաքրման և առաջացող թափոնների տեղափոխման հետ կապված կանոնները սահմանել ըստ կառավարության 28.08.2003 թվականի N°1228-Ն որոշման համապատասխան:
6. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու



մասին» №438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

7. Շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում կարմիր գրքում հանդիպող բուսատեսակների հայտնաբերման դեպքում դրանց պահպանումն ու տեղափոխումը իրականացնել ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 14-ի №781-Ն որոշման համաձայն:
8. Պահպանել աշխատողների սանիտարական կանոնները և նորմերը համաձայն առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19 №15-Ն հրամանի:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Զինջ» ՍՊԸ-ի ընկերության կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ քաղաքի ՈԿՖ-ի Բանավան թաղամասի և Արարատ գյուղի մի հատվածի կենցաղային կեղտաջրերի մեխանիկական և կենսաբանական մաքրման կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Հովակիմ Ֆրունզիկյան